Հավելված
Արզնի համայնքի ղեկավարի 2021
թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 250 որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթներ Արզնիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

1. Կոտայքի մարզի Արզնիի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-հաշվապահ (ծածկագիր 2.3-1)

Գործառույթներն են՝

- իրականացնում է հաշվապահական հաշվառում,
- ապահովում է աշխատակազմի գործավարության, նամակագրության և արխիվային գործի վարումը,
- պաշտոնի անձնագրով սահմանված այլ գործառույթներ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

1) բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,

2) ունի «Համայնքային ծառայության մասին», Հանրային ծառայության մասին, «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին», «Բյուջետային համակարգի մասին», «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքների, աշխատակազմի կանոնադրության և այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

3) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

2.Կոտայքի մարզի Արզնիի համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ (ծածկագիր 3.3-1)

Գործառույթներն են՝

-իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողամասերի բարելավման աշխատանքներ.

-իրականացնում է վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիք հաշվառումը և կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը.

- վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հող օգտագործողների կողմից հողային

օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ,

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

1) առնվազն միջնակարգ կրթություն, առանց աշխատանքային ստաժի,

2) «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հողային օրենսգրքի, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

4)ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթները կկայանա 2022 թվականի հունվարի 21-ին ժամը 11:00 Արզնի համայնքապետարանի շենքում (գ.Արզնի):

Դիմող ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (լրացվում է փաստաթղթեր ներկայացնելիս),

2)տվյալ պաշտոն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներ բավարարումը հավաստող փաստաթղթերի, դիպլոմների, վկայականների, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները բնօրինակների հետ միասին:

3) արական սեռի անձինք նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը բնօրինակի հետ միասին

4)մեկ լուսանկար 3x4 սմ չափի

5)անձնագրի պատճենը:

Փաստաթղթերը ընդունվում են Արզնիի համայնքապետարանի աշխատակազմում, հեռ. +374 22 94 880 կամք. Հրազդան, Կենտրոն վարչական շենք, Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾ Հ բաժնում, հեռ. 0223 23413, ժամը 10:00-ից մինչև 17:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է 2022 թվականի հունվարի 07-ը, ժամը 17:00: